

Էլինոր Գլենի Անվան Կրթաթոշակի Հիմնադրամ

Մենք մեր կրթաթոշակի հիմնադրամը կոչել ենք Էլինոր Գլենի պատվին, ով եղել է երկարատև խնամքի աշխատողների և կանանց իրավունքների պայքարի առաջատարներից մեկը: Մենք հպարտությամբ ենք հիշատակում նրա ջանքերը այս կրթաթոշակի հիմնադրամի միջոցով, որը հիմնադրվել է SEIU ULTCW-ի առատաձեռն ֆինանսավորման շնորհիվ, իսկ այժմ շարունակվում է SEIU 2015 Միության կողմից: Լինելով առաջին կին կազմակերպիչը, ով աշխատանքի էր ընդունվել SEIU-ի կողմից, նա հասարակական սեկտորի կազմակերպման առաջատարն էր դեռ այն ժամանակ, մինչ նրանք ձեռք բերեցին հավաքական բանակցություններ վարելու իրավունք: Նա Լոս Անջելեսում անձամբ ստեղծեց իր միությունը՝ SEIU Տեղական 434-ը՝ անդամները թիվը 700-ից հասցնելով 7,000-ի, եւ առաջնորդեց Մարգային աշխատողների առաջին գործադուլը՝ հանուն աշխատավարձերի և ավագության իրավունքների պաշտպանության: Այդ միության արդյունքում ստեղծվեց և զարգացավ SEIU Տեղական 434B Միությունը, որը առաջնորդվեց Օֆելիա Մաքֆադդենի կողմից: Մինչ այդ՝ 1968 թ.-ին, Էլինոր Գլենը աշխատանքի էր ընդունել Օֆելիա Մաքֆադդենին որպես աշխատակազմի ներկայացուցչի և խրախուսում էր նրա առաջնորդությունը: Ժամանակակից տնային խնամակալության շարժումը զարգացնելուն օժանդակելու նրա դերը ընդմիջտ կհիշատակվի Էլինոր Գլենի մասին մեր հիշողություններում: SEIU Տեղական 434B-ը հետագայում դարձավ ULTCW, իսկ այժմ՝ SEIU 2015:

Իրավասությունը

Էլինոր Գլենի Կրթաթոշակը առաջարկվում է Երկարատև Խնամքի աշխատողներին և նրանց անմիջական ընտանիքի անդամներին, ինչպես նշված է ստորև:

1. Իրավասու խնամակալը 2017 թ. Մայիսի 31-ի դրությամբ պետք է առնվազն մեկ տարի անընդմեջ աշխատած լինի որպես երկարատև խնամքի աշխատող SEIU Տեղական 2015 Միությամբ ներկայացվող 49 մարզերից որևէ մեկում:
2. Իրավասությունը տրվում է խնամակալին կամ նրա երեխաներին, խորթ երեխաներին կամ խնամառու երեխաներին, ինչպես նաև թոռներին:
3. Դիմորդները պետք է հաճախեն որևէ քառամյա Համալսարան, լիցենզավորված հանրային քոլեջ, տեխնիկական քոլեջ կամ առցանց քոլեջ կամ ընդգրկված լինեն որևէ ավարտական ծրագրում տվյալ տարվա աշնանային կիսամյակի դրությամբ, որի ընթացքում նրանք դիմում են:
4. Ցանկացած անհատ այս կրթաթոշակը կարող է ստանալ ընդամենը մեկ անգամ:
5. Կրթաթոշակների շնորհումը կսահմանափակվի յուրաքանչյուր ընտանիքին տարեկան մեկ անգամ կրթաթոշակով:
6. Կրթաթոշակները կշնորհվեն անկախ ցանկացած դիմորդի սեռական, ռասսայական, ազգային ծագումից, սեռական կողմնորոշումից, տարիքից կամ հաշմանդամության կարգավիճակից:

Վերանայող հանձնաժողովը կընտրվի ամեն տարի այն մարզերի երկարատև խնամքի աշխատողների խմբից, որոնք իրավասու կլինեն դիմում ներկայացնելու: CLTCEC-ի Խորհուրդը կքվեարկի թեկնածուների համար, ովքեր կարող են ինքնուրույն առաջադրվ կամ

առաջադրվել իրենց գործատիրոջ կամ CLTCEC-ին առընթեր գործընկերոջ կողմից: Առաջադրված թեկնածուներից CLTCEC-ի խորհուրդը կընտրի կրթաթոշակի հիմնադրամի դիմորդներին վերանայող 5 հոգու՝ հետևելով CLTCEC-ի ներկայիս էթիկայի օրենքների ուղեցույցներին: Վերանայողները կուսումնասիրեն կրթաթոշակի հիմնադրամի յուրաքանչյուր դիմումագիրը և այն կգնահատեն համաձայն ուղեցույցների:

Ուղեցույցներ

Դիմումագրի բոլոր երեք հատվածները կուսումնասիրվեն և կգնահատվեն: Դիմորդը հնարավորություն ունի վաստակելու առավելագույնը 50 միավոր: Անձնական պատմության շարադրությունը կքննարկվի վերանայող հանձնաժողովի կողմից՝ առաջնորդվելով ստորև նշված հրահանգներին հետևելու դիմորդի հնարավորությամբ: Կամավորական աշխատանքները կգնահատվեն համաձայն ներկայացված տեղեկության ճշգրտության: Արձանագրությունները կգնահատվեն՝ համաձայն դիմորդի կողմից նվազագույն պահանջները ներկայացնելու ունակության:

Դիմումագրերի Վերաբերյալ Հաճախակի Տրվող Հարցեր.

Կրթաթոշակի տեսակները. Կրթաթոշակի գումարը կարող է օգտագործվել տվյալ ծրագրի հետ կապված ցանկացած ծախսեր վճարելու նպատակով: Դա կարող է ներառել դասագրքերը, նյութերը, ուսման վարձը, հագուստը, փոխադրամիջոցը կամ այլ պարագաներ, որոնք կարող են օգտագործվել ծրագրում ընդգրկված լինելու ընթացքում:

Քանի՞ կրթաթոշակներ են առաջարկվելու: Տարեկան 20 կրթաթոշակ:

Որքա՞ն հաճախականությամբ են դրանք առաջարկվելու: Տարին մեկ անգամ:

Որքա՞ն է կազմելու յուրաքանչյուր կրթաթոշակի արժեքը: \$1,000 արժողությամբ վճարաթերթիկը փոստով կուղարկվի հաղթող դիմորդին:

Դիմորդը այն անձնավորությունն է, ով դիմում է կրթաթոշակին, և նա կարող է լինել Երկարատև Խնամի աշխատող կամ նրա անմիջական ընտանիքի անդամը՝ երեխան, խորթ երեխան, նրա խնամքին ենթակա երեխան կամ թոռը:

Իրավասու Խնամակալը Երկարատև Խնամքի Աշխատողն է:

Խնամակալի Գործատերը այն անձնավորությունն է, ում խնամում է ՏԽԾԾ Խնամակալը, կամ Խնամքի Տան կամ Մասնավոր Գործակալության հաստատությունը/գործակալությունն է:

Դիմորդի շարադրությունը պետք է հստակորեն նկարագրի՝

- Դիմորդի՝ սոցիալական արդարության գաղափարը, աշխատավորական կամ քաղաքական ակտիվությունը
- Դիմորդի՝ հանուն սոցիալական փոփոխությունների գործելու նպատակները
- Շարադրությունը պետք է գրված լինի ճիշտ քերականությամբ, կետադրական նշաններով և ուղղագրությամբ

Ցուցակ. Կազմակերպության անունը, պատասխանատվությունը, ժամանակահատվածը, կամավորական աշխատանքների կամ ակտիվության մոտավոր ժամերը: Ձեր ամփոփ հղմանը ավելացրեք անուններ և հեռախոսահամարներ՝ ստուգելու նպատակով:

Կարող են ընդունվել Ոչ-Պաշտոնական Արձանագրություններ: Եթե Դուք այս տարի ավագ դպրոցի շրջանավարտ եք, ապա Դուք պետք է կցեք Ձեր ավագ դպրոցի արձանագրությունը: Եթե ավագ դպրոցից հետո առնվազն մեկ տարի սովորել եք մեկ այլ հաստատությունում, ապա Դուք պետք է կցեք Ձեր քոլեջի, համալսարանի կամ տեխնիկական/նեղ մասնագիտական հաստատության արձանագրությունը: Ձեր արձանագրությունները պետք է ապացուցեն, որ Դուք պահպանել եք առնվազն միջինում 3.0 գնահատման միավոր: Փաստաթղթերը պետք է ներկայացնել դիմումնագիր ներկայացնելուց հետո մեկ շաբաթվա ընթացքում:

Կիսատ ներկայացված Դիմումագրերը չեն գնահատվի:

Դիմումագրեր ընդունելու վերջնաժամկետը չորեքշաբթի՝ 2017 թ. Մայիսի 31-ն է: